



ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 64

Ձեռնարկողը՝

**<<ԱՆԻ ՏՈՒՖ ՊՐՈԴՈՒԿՏ>> ՍՊԸ**

Կողայքի մարզ, ք. Աբովյան, Երիվասրդական փ. 1/4, բն 8/1

Գործունեությունը՝

Ավտրամանի պեմզային գութերի հանքավայրի <<Ձոր>>  
լիղամասում օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա  
միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեդպություն  
Ժիրակի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի  
տնօրենի ժ/պ՝

Ռ. Ոսկանյան



# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՍԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՀԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՍՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 67

<16> 08 2018թ.

**Շիրակի մարզի Ավդրամանի պեմզային գոտիքերի հանքավայրի  
<<Զոր>> գեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման  
շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման  
հաշվետվություն**

Ձեռնարկող՝

<<Անի Տոլֆ Պրոդուկտ>> ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվետվություն  
/Ա կատեգորիա/

Տեղադրման վայրը՝

Շիրակի մարզ, Անի համայնքի  
Բագրավան բնակավայր

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան գյուղի վարչական սահմաններում, բնակավայրից 10 կմ հեռավորության վրա: Հանքավայրի «Զոր» տեղամասը տեղակայված է Ախուրյան գետի ծախ ափին, մերձսահմանային գոտում:

Մոտակա բնակավայրերն են՝ Խարկով, Բագրավան գյուղերը, Անիպեմզա և Անի համայնքները, որոնց հետ և երկաթուղային կայարանների հետ հանքավայրը կապված է գրունտային և ասֆալտապատ ճանապարհներով: <<Զոր>> տեղամասի տարածքը գտնվում է 1515-1525մ բացարձակ բարձրությունների վրա:

« Շիրակի մարզի Ավդրամանի պեմզային տուֆերի հանքավայրի «Զոր» տեղամասի պեմզային տուֆերի պաշարներն ըստ B կարգի՝ 350.3հազ.մ<sup>3</sup> քանակով, հաստատվել են Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Պետական ընդերքաբանական փորձաքննության կողմից՝ 0.1.11.2017թ. թիվ 5 եզրակացությամբ: Պաշարները հաստատվել են որպես հումք՝ Երեսապատման իրերի բլոկների արտադրության համար: Երեսապատման համար պիտանի բլոկների ելքն ընդունվել է 32.6%:

Հանքավայրի շահագործման 1-20 տարիներին՝ տարեկան արտադրողականությունը կազմելու է 2300մ<sup>3</sup>, շահագործման 21-50 տարիներին՝ տարեկան 10000մ<sup>3</sup> տուֆային



զանգված (արդյունահանվող պաշար): Նախագծված բացահանքի օտարման տարածքը կազմում է 3.4հա, ծառայման ժամկետն ընդունվել է 50 տարի:

Գործունեության համար դիտարկվել են այլնտրանքային տարբերակներ, ընտրված տարբերակը հիմնավորվել է՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունների ծավալից և սոցիալական ազդեցություններից ենթով:

Հանքավայրի հարևանությամբ առկա են տարբեր ընկերությունների կողմից շահագործվող և լքված հանքավայրեր: Տնտեսածքը խախտված է, նախկինում առանց համապատասխան թույլտվությունների իրականացվել է տուֆի արդյունահանում: Տարածքում ժամանակակից առաջացումները ներկայացված են տուֆերի բեկորներ պարունակող ավազակավային և ավազախճային նստվածքներով: Բուն հանքավայրի տարածքում հողաբուսական շերտը թույլ է զարգացած, տեղ-տեղ հանդիպում է խոտաբույսերի արմատներ պարունակող շագանակագույն հողեր, որի հզորությունը չի գերազանցում 0.2 մ-ը /ինչը պայմանավորված է նաև հողմահարման գործոններով/: Հանքավայրի տարածքում հողային ծածկույթը ներկայացված է տեղ-տեղ՝ տարախոտահացազգի խոտաբույսերի տարածմամբ, բացակայում են՝ ծառաթփային բուսականությունը: Մակաբացման աշխատանքների ժամանակ հողի բերրի շերտը հատուկ միջոցառումներով պահեստավորվելու է բացահանքի հարավային եզրագծի հարևանությամբ, արտաքին լցակույտում՝ ընկերության կողմից վարձակալած տարածքում, ինչը հետագայում օգտագործելու է ռեկովտիվացիոն նպատակով:

Տարածաշրջանի ջրային միավորը Ախուրյան գետն է, որը հոսում է խոր կիրճով: Հանքավայրի և Ախուրյան գետի տեղադիրքով պայմանավորված շահագործման աշխատանքները չեն կարող ազդեցություն ունենալ Ախուրյան գետի ջրի որակական ցուցանիշների վրա: Տեղամասում և դրա հարակից տարածքներում շահագործական աշխատանքներին խոչընդոտող սողանքներ, տեկտոնական խախտումներ, փլուզումներ և այլ տիպի գեղողինամիկ երևույթներ չեն արձանագրվել:

Նախագծված բացահանքը վերջնական դիրքում բնութագրվում է հետևյալ պարամետրերով.

- առավելագույն երկարությունը – 235մ,
- առավելագույն լայնությունը – 230մ,
- առավելագույն խորությունը – 14.0մ,
- օտարման մակերեսը – 3.4հա:

Հանքավայրի մշակման համար ընտրված է ընդլայնական, միակողմանի մշակման համակարգ՝ մակաբացման ապարների ներքին լցակույտերի ծևավորմամբ:

Մշակման համակարգի պարամետրերն են՝

- հանույթային աստիճանի բարձրությունը – 5,0-6.0մ,
- ենթաստիճանի բարձրությունը – 2,5-3.0մ,
- աստիճանի թեքության անկյունը – 90°,
- աշխատանքային հրապարակի լայնությունը – 20մ,
- Մարվող աստիճանների թեքության անկյունը - 90°.

Հանքաշերտի մշակումը կատարվելու է երկու՝ 5-6մ բարձրությամբ զուգահեռ շահագործվող աստիճաններով: Առաջին հանքաստիճանի հրապարակի նվազագույն



լայնությունը 30մ է, որն ապահովելուց հետո, առաջինին զուգահեռ, իրականացվում է երկրորդ հանքաստիճանի շահագործումը:

Միաքարի անջատումը զանգվածից կատարվում է հորատասեպային եղանակով: Միաքարի ճեղքումը բլոկների կատարվում է հիդրավլիկական սեպերի միջոցով, որոնք տեղադրվում են սեպանցքերում: Բլոկների կոպտամշակումը՝ համապատասխան ձև տալու համար, կատարվելու է հարվածապոկիչ մուրճերի օգնությամբ:

Բլոկների բարձման համար նախատեսվում է ավտոկոռունկ, իսկ հերթափոխում՝ 2.33մ<sup>3</sup> մակարացման ապարների և 5.97մ<sup>3</sup> արտադրական թափոնների հեռացման համար նախատեսվում է մեկ հատ անվային բարձիչ: Արդյունահանված բլոկները ավտոինքնաթափերով տեղափոխվելու են մինչև 2.0կմ միջին հեռավորության վրա գտնվող մշակման արտադրամաս :

Բացահանքի շահագործման ընթացքում ջրամատակարարումը նախատեսված է արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև աշխատանքային հրապարակը, լցակույտը և ավտոճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու համար: Փոշենստեցման մակերեսները բացահանքում կկազմեն՝ 1250մ<sup>2</sup>, որի համար ջրի ծախսը հաշվարկված է 337.5մ<sup>3</sup>/տարի, կամ 1.875մ<sup>3</sup>/օր: Աշխատողների տնտեսակենցաղային կարիքների համար ջրի ծախսը հաշվարկվել է 98.8մ<sup>3</sup>/տարի, կամ 0.38մ<sup>3</sup>/օր: Կենցաղային կեղտաջրերը լցվելու են 25մ<sup>3</sup> անջրաթափանց հոր, որտեղից սահմանված կարգով հեռացվում են: Արդյունաբերական հրապարակ խմելու ջուրը բերվելու է կցովի ջրի ցիստեռնով, իսկ փոշենստեցման նպատակով տեխնիկական ջուրը բերվելու է K0-002 ջրան-լվացող ավտոմեքենայով:

Բացահանքում ջրահեռացման միջոցառումներ չեն նախատեսվում, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ հրաբխային տուֆերը և պեմզաները աչքի են ընկնում բարձր ջրաթափանցելիությամբ:

Տեղամասում մակարացման աշխատանքները իրականացվելու է բուլղոգերի օգնությամբ, աշխատանքները ներառում են 0,43մ միջին հզորությամբ փիսրուն ապարների և 1.0մ միջին հզորությամբ փուշտայի տեղափոխում՝ մինչև 30մ հեռավորությամբ՝ ներքին լցակույտ: Լցակույտ առաջացնող ապարների ընդհանուր ծավալը կազմում է 48629մ<sup>3</sup>, այդ թվում՝ 14623մ<sup>3</sup> - փիսրուն ապարներ, 34006մ<sup>3</sup> - փուշտա, 234255մ<sup>3</sup> - արտադրական թափոններ:

Ենելով հանքավայրի լեռնաերկրաբանական պայմաններից և այն փաստից, որ հանքավայրը շահագործվելու է հանքաշերտի ամբողջ հզորությամբ՝ երկու զուգահեռ հանքաստիճաններով, նախատեսվում է լցակույտ առաջացնող ապարները կուտակել ներքին լցակույտում, ինչը հողերի վրա լրացնությամբ ազդեցություն չի ենթադրում: Լցակույտի հարթակի նիշն ընդունվում է բացահանքի հատակի նիշը: Լցակույտի ընդհանուր օտարվող մակերեսը կկազմի 3.4հա, միջին բարձրությունը՝ 5.8մ:

Հողածածկի պահպանության հիմնական միջոցառումը խախտված հողերի ռեկուլտիվացման աշխատանքներ են, որոնք իրականացվելու են շահագործման աշխատանքների ավարտից և պաշարների մարումից հետո: Այդ աշխատանքները ներառում են բուլղոգերի օգնությամբ ներքին լցակույտում կուտակված ապարների փռում և հարթեցում մշակված տարածքում: Հետագա կենսաբանական վերականգնումն ապահովելու համար հարթեցված մակերևույթի վրա փռվելու է հողաբուսական շերտը,

որը մոտ 2000մ<sup>3</sup> ծավալով պահեստավորվելու է բացահանքի հարավային մասի հարևանությամբ՝ արտաքին լցակույտում: Ռեկուլտիվացված տարածքում կկատարվի նաև տեղանքին բնորոշ խոտաբույսերի սերմերի ցանք:

Ոեկուլտիվացիայի ենթակա մշակված տարածքը կազմելու է 3հա, իսկ մշակված տարածության վերականգնման ընդհանուր տևողությունը կկազմի 64 օր: Այդ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ծախսերի խոշորացված նախահաշիվը նախագծում գնահատվել է՝ 2344.2 հազ.դրամ:

Հանքավայրի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կանխելու, կամ նվազեցնելու նպատակով նախագծում նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ, այդ թվում՝

- մեքենաների վրա զտիչ սարքերի տեղադրում, մթնոլորտային օդը աղտոտումից զերծ պահելու նպատակով,

- աշխատանքային հրապարակների, հանքախորշերի, լցակույտերի, ավտոճանապարհների պարբերաբար ջրում՝ տարվա չոր և շող եղանակներին փոշեառաջացման կանխման նպատակով,

- Նավթամթերքների պահեստավորում բացահանքի արտադրական հրապարակում հասուն հատկացված տեղում՝ ապահովելով թափված նավթամթերքների հոսքը բետոնապատված փոս և բացառելով արտահոսքերը շրջակա տարածքներ:

Մեքենաներում օգտագործված, փոփոխված յուղերը, քսայուղերը, անվադողերը վաճառվելու, կամ հանձնվելու են նման թափոնների գործածության լիցենզիա ունեցող կազմակերպությունների: Կենցաղային աղբի և տարրեր տեսակի թափոնների համար համապատասխան վայրերում նախատեսված է աղբարկեր, կամ տարողություններ: Ընդերքօգտագործման թափոնների (դատարկ մակարացման ապարներ, որոնց ընդիհանուր ծավալը կազմում է տարեկան  $2155\text{m}^3$ ) ճիշտ կառավարման համար նախատեսվել են միջոցառումներ և ծախսեր (տարվա կտրվածքով այդ ծախսերը հաշվարկված են  $61550 \ll \text{դրամ}$ ):

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ընկերությունը շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության կանխարգելման և շրջակա միջավայրի բաղադրիչների (օդ, ջուր, հող) որակի վերահսկողության համար նախատեսում է մշտադիտարկումներ, որոնց գործողությունների ծախսերը նախնական գնահատվել են 350հազար դրամ/տարեկան:

Հաշվետվությունում ներկայացվել են միջոցառումներ, որոնք ուղղված են սոցիալական հնարավոր ազդեցությունների կանխարգելմանը, աշխատանքի անվտանգության ապահովմանը և հնարավոր վթարային իրավիճակների դեպքում ազդեցությունների նվազեցմանը: Նախատեսվող բոլոր միջոցառումներն ամփոփվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Նախնական գնահատման հայտի և հաշվետվության փորձաքննության փուլերում հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Շիրակի մարզի Բագրավան գյուղու անցկացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում մասնակիցների կողմից հավանության է արժանացել նախատեսվող գործունեության իրականացումը:



Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները, պետք է նշել, որ նախագիծը մշակվել է բնապահպանական և ընդերքօգտագործման ոլորտները կարգավորող <<օրենսդրական պահանջներին և նորմատիվակարավական ակտերին համապատասխան: Հանքավայրի շահագործման ընթացքում թույլատրելի նորմերը գերազանցող արտանետումներ և արտահոսքեր չեն առաջանա: Առաջարկվող տեխնոլոգիական լուծումների և հաշվետվությունում ներկայացված բնապահպանական և սոցիալական ազդեցությունների մեղմացման միջոցառումների իրականացման արդյունքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, ինչպես նաև հողայիշ ռեսուրսների վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

## Փորձաքննական պահանջներ

- Գործունեության ընթացքում անհրաժեշտ է ապահովել բնապահպանական կառավարման պլանում և մոնիթորինգի պլանում առաջարկվող միջոցառումների և մոնիթորինգային դիտարկումների իրականացումը և ժամանակացույցերը, որոնց արդյունքները պետք է հասանելի լինեն պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը (իրականացումը՝ նախապատրաստական, շահագործման և փակման փուլերում):
    - Գործունեության իրականացման ընթացքում ջրօգտագործումը և ջրահեռացումն անհրաժեշտ է իրականացնել «օրենսդրությամբ սահմանված կարգով (նախապատրաստական փուլում, հանքարդյունահանման աշխատանքների ընթացքում):
    - Շահագործման ընթացքում առաջացող տարրեր տեսակի թափոնների հավաքումը և հեռացումը (այդ թվում վտանգավոր թափոններ՝ յուղեր, քսայուղեր, անվաղողեր և այլն) անհրաժեշտ է իրականացնել «օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵՀՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Անի Տուֆ Պրոդուկտ>> ՍՊԸ կողմից ներկայացված Շիրակի մարզի Ավդրամանի պեմզային տուֆերի հանքավայրի <<Զոր>> տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

## Տնօրենի տեղակայ

Ա. Դռնոյան

Գլխ. մասնագետ

Հ. Մկնարքիան